

Հոս շատերը մարդուս մօրուքին կխնդան, վասնզի այրերուն մեծ մասը սափրիչ են. մաս մ'ալ կայ որ միշտ տխրադէմ է, վասն զի դարբին է եւ երկաթի հետ կաշխատի մինչեւ երեկոյ եւ փափուկ խնդիրներու մէջ մտնել չուզեր: Երկու մասն ալ աշխատասէր եւ գործունէայ են՝ երբ ածելիի եւ կռանի վրայ է խնդիրը, իսկ երբ իրենց գաւակներուն դաստիարակութեան վրայ խօսք բացուի՝ այն ատեն անդամալոյծ կկտրին եւ պրոպատիկէայ աւագանին մէջ նետուելու փափաք ալ չեն զգար:

Քասըմ բաշայի օդը շատ աղէկ է բժիշկներու համար. քանի անգամ որ *քօլերա* եղած է մայրաքաղաքիս մէջ՝ Քասըմ բաշայի մէջ ծնունդ առած է եւ ուրիշ թաղի մէջ մեռած է: Շատ աղքատ բժիշկներ այս թաղին օդին շնորհիւ մեծ հարստութիւններ դիզած են:

Այս թաղին օդը ամառուան եղանակին մէջ միշտ լուծում կպատճառէ: Թուրքօ - ռուսական կռիւէն առաջ Արեւելեան խնդրոյն լուծում տալու համար դեսպանախորհուրդն այս թաղին ստորոտն ըրաւ իւր նիստերը:

Այս թաղին մէջ օրէնք մը կայ, որով աղքատներուն խստիւ արգիլուած է հիւանդ ըլլալը. հարուստները միայն իրաւունք ունին հիւանդանալու: Անցեալներն աղքատ մը դիպուածով հիւանդացաւ եւ թաղականին դիմեց, որ թուղթ մը առնէ ու Փրկիչի հիւանդանոցը երթայ: Թաղական խորհուրդն նկատելով, որ այս աղքատն օրինաց դէմ վարուելով յանդգնած է հիւանդ ըլլալու՝ զայն պատժելու նպատակաւ ամբողջ վեց ամիս մերժեց անոր թուղթ տալ: Աղքատին ճարը հատնելով՝ տեղէ մը տասը դահեկան ճարեց ու թաղականին տալով յաջողեցաւ անկէ թուղթ մը առնելու եւ այդ թուղթով Փրկիչ մտնելու: Այս օրէնքը շատ արդար է: Թաղականը մօտերս ծանր տուրք մը պիտի սահմանէ եղեր բոլոր այն աղքատներուն համար, որ կհամարձակին օրէնքն ոտնակոխ ընելով հիւանդանալ:

Այս թաղին գետն է այն նշանաւոր ականն, որ Բերայէն կը վազէ եւ այս թաղէն անցնելով ծովը կթափի: Այս գետին վրայ զբօսարաններ շինուած են, ուր կ'երթայ թաղեցին՝ քիչ մը օդ առնելու եւ ծխախոտ ու կլկլակ քաշելով ժամանակ անցունելու: Այս գետը կրնայ նաւարկելի ըլլալ, միայն թէ ճամբորդներուն քիթը կտրելու է եւ կամ քիթը կտրած ճամբորդներ ճարելու է: